ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Սարչապետ համայնք, գ.
Սարչապետ, Հեռ. (077)867459 ,
sarchapet.lori@mta.gov.am

N 197-19
16 ապրիլ 2019թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Ձեզ եմ ներկայացնում Սարչապետ համայնքի ղեկավարի 2019 թվականի ապրիլի 15-ի թիվ 9 կարգադրությունը և ղեկավարի թիվ 102-104 որոշումները:

Առդիր՝4 էջ:

Համայնքի ղեկավար՝ **Բորիս Բարոյան**

Կապ. ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 102

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԻՆԳԱ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ինգա Պողոսյան Ժորիկի 2019 թվականի ապրիլի 10-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Սարչապետ համայնքի փ.1, նրբ.2, 2 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Ինգա Պողոսյան Ժորիկի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքներին ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

2019թ. Ապրիլ 11
գ.Սարչապետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 103

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի 3-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետով, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացիներ Սուրեն Սարոյի Մխոյանի, Սիրուն Եդվարդի Մխոյանի, Սարո Սուրիկի Մխոյանի, Գուրենիկ Սուրիկի Մխոյանի, Թամարա Նիկոլի Մխոյանի և Անի Սարիբեկի Մխոյանի դիմումը հողամասից հրաժարվելու վերաբերյալ, անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման թիվ 1554636 վկայականը՝ ***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.***

1. Քաղաքացիներ Սուրեն Սարոյի Մխոյանին, Սիրուն Եդվարդի Մխոյանին, Սարո Սուրիկի Մխոյանին, Գուրենիկ Սուրիկի Մխոյանին, Թամարա Նիկոլի Մխոյանին և Անի Սարիբեկի Մխոյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 06-100-145-7 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, 0.21 հա մակերեսով, գյուղատնտեսական նշանակության /վարելահող/ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15 օրյա ժամկետում ներկայացնել << կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանում:

3. Աշխատակազմի քարտուղարին ՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

5. Ուժը կորցրած ճանաչել Սարչապետ համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտի 28-ի <<Սարչապետ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին>> թիվ 76-Ա որոշումը:

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

2019թ. ապրիլ 12
գ.Սարչապետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 104

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի 3-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետով, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացի Անուշկա Նիկոլի Բարսեղյանի դիմումը հողամասից հրաժարվելու վերաբերյալ, անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման թիվ 1530776 վկայականը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Անուշկա Նիկոլի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող 06-100-125-352 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, 0.32 հա մակերեսով, գյուղատնտեսական նշանակության /խոտհարք/ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15 օրյա ժամկետում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանում:

3. Աշխատակազմի քարտուղարին ՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

5. Ուժը կորցրած ճանաչել Սարչապետ համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտի 28-ի <<Սարչապետ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին>> թիվ 72-Ա որոշումը:

Համայնքի ղեկավար՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

2019թ. ապրիլ 15
գ.Սարչապետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

15 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՈՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 91-րդ, 92-րդ և 93-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով և հաշվի առնելով Արմեն Մերուժանի Բաղդասարյանի անձնական դիմումը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. Արմեն Մերուժանի Բաղդասարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի կազմում ընդգրկված Նորաշեն բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնում՝ եռամսյա փորձաշրջանով:

2. Արմեն Մերուժանի Բաղդասարյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել 145 000 (մեկ հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ, հետագայում՝ համաձայն համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի:

3. Արմեն Մերուժանի Բաղդասարյանի հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ եռամսյա փորձաշրջանով:

4. Արմեն Մերուժանի Բաղդասարյանին անցնել պարտականությունների կատարմանը 2019թ. ապրիլի 16-ից:

Համայնքի ղեկավար՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

2019թ. ապրիլ 15
գ.Սարչապետ